48. ՔՈՍԱԿ ԱԽՊԵՐԸ

Ընում ա, չընում, մին մարթ ա ընում։ Էտ մարթին շինացիք Քոսակ ախպեր ըն ասում։ Էտ մարթը վեր ուրան Քոսակ չասին, պիրում ա մին քյեփ սարքում։ Մին եզն ա մորթում, լոխճին ղոնաղ ծեն տամ։

Կյամ ըն օտում, քյինելիս լոխ ասում.— Ապրիս, Քոսակ ախպեր, շա՞տ ապրի՛ս, Քոսակ ախպե՛ր։

Քոսակ ախպերը եր ա կենում էշը կաշվավ պեռնում, քյինում վեր տանե ծախե։ Վեր մըթնում ա, հսնում ա մին շեն, քյինում, վեր մին տան ղոնաղ ըղնե, տրեսնում տանը մինակ մին կնեգյ։ Էլ քյինում չի, տռանը վրենն ա կենում։

Շատ ա կենում, թա խրեգյ տեսնում ա մին մարթ ա կյամ պառռուգին ասում։

Էտ եկողը ասում ա. — Պա խե՞ տռանըն ըս վրենը կացալ։

Ասում ա. — Տանը մարթ չիկար, քյեցե վեչ։

Էտ մարթն ասում ա. — Ե՛ք քյինինքյ։

Ամմա Քոսակ ախպերը ասում ա. — Կյամ չը՞մ։

Էն մարթը ասում ա. — Խե՞։

Քոսակ ախպերը ասում ա. — Վեր կյամ, էշս էլ բիդի պիրիմ։

Ասում ա. — Պա դե էշն էլ տանինքյ, կյումումը կրկապիս։

Էշը տանը մղակրմը կապում ըն, ուրանք ստոլին նստած հաց օտում։ Մին խիլլա ընցնում ա, Քոսակը օղում ա թա շլափկան դուզուցընե, չունքյի վեր շըլըփկումն ա միշտ էշին կյորե տվալ, էշը տեսնում ա թա չէ, ղռռամ ա։

Տնատարը ասում ա. — էշը հի՞նչ ա ասում, տու կըգյիդաս։

Ասում ա.— էշն ասըմ ա. «կրվաթեն տակեն մարթ կա»։

Տնատարը եր ա կենում կացնավը թխում, էտ մարթեն սպանում։

Սպանում ա թա՞ չէ, Քոսակեն ասում ա. — Պա էս հո՞ւնց անիմ, վեր մեր շենացեքյ դյիդան վե՞չ։

Քոսակն ասում ա. — Ցրես լավ կըփըռտակիմ։

Տնատարը արան մին քսակ վըեսկե յա տամ, թա տար փըռտակե։

Քոսակը կյամ ա մին շենու ղրաղե տըեսնում մին կալ ցորեն, կալին մաչին թուփ ըրած, մարթ չկա, տանում ա սպանած մարթը տընում ցորնեն մաչին, էշը անում ցորնեն յրա։ Տարը հռնուցա ուշունց ա տամ, թա՝— էշը ցորնան տեն ըրա։ Տա տեն չի անըմ։ Ցորնատարը կյամ ա թխում, սպանված մարթը վեր ա ընգնում։

Քոսակը տուս ա կյամ, ասում. — Խե՞ յրս իմ հնգերս սպանալ։

Ցորնատարը ասում ա. — Բալա՛մ, մին խաթա յա, ընգալ ըմ, կա մին քսակ վըեսկե տամ, տար փըռտակե։

Դե համ էլ էն վախտը հրուստեն հետե վըեսկեն հի՞նչ ա։

Ցոր ա օնում էտ վըեսկեն էլ պիրում, մեռալը թաղում մին խընդակում, ինքյը կյամ ուրանց շենումը չավ անում, թա՞. — Կաշին տարալ ըմ վըեսկավ փոխալ, պերալ։

Շինացեքյ եր ըն կենում ուրանց տվրնեն տանում, մորթում կաշին տանում, թա ծախին, ամալ չի կյամ։

Կյամ ըն շենը ասում.— Քոսակ ախպեր, քյալաքյ ըս եկալ մըեզ։

Քոսակ ախպերը ասըմ ա.— Ծովումը էն ա, լավ թմաշա կա, քյինինքյ։

Շինացեքյ լոխ քյինըմ ըն։ Հղցեն քոսակը պտահում ա մին չոբանի, ընդրա նհետ շորերը փոխում ա, ընդրան ըղարկում ծովեն կոշտը, թա՞ էս ա յրս էլ ըմ կյամ։

Չոբանը քյնամ ա, թա ծովեն եշի, շինացեքյ կուփե յրն տամ քցում ծովը։

Քոսակը շուբանեն վըխեբրնեն յոր ա օնըմ, կյամ տոն, թա. — Մեր նանը մղոված, ինձ քցեցեքյ ծովը, ամմա ընդեղ լոխ վեչխար ա, դե քյեցեքյ տուք էլ պերեքյ։

Շինացեքյ լոխ քյինում ըն, նի տնոնում ծովը, ամմա Քոսակը լավ ա ապրում։

Քոսակը վեր մինակ ա մնում, ասում ա. — էս հի՞նչ լավ ա, շատ ժողովուրթ ինին, միկա էլ ուրանք օտին, ինձ նհետ ապրին, քան թա՞ մինակ յրես։

Ըստուծանա իրեք խնձոր վեր ընգնե. մինը՝ ինձ, մինը՝ քյըեզ, մինն էլ՝ էն մարթին, վեր լըսըմ ա։